

–Խիղճն ասանկ գործերու մէջ մտնելու իրաւունք չունի. խղճին ապտակ մը կը զարնէք դուրս կը վռնտէք... կամ թէ ձեր խղճին քանի մը ոսկի կու տաք...

–Իրաւունք ունիք. խղճին դպչելու բան մը չկայ հոս. մեր ըրածը գողութիւն չէ, սպանութիւն չէ. եղբայրն իւր քոյրէն գետին կ'ուզէ, եւ քոյրն ալ կու տայ. ասոր ո՞վ կրնայ բան մը ըսել...:

–Խղճի վերաբերեալ խնդիր չէ աս... փառք Աստուծոյ, ձեր ըրածը գողութիւն չէ. ազգին մէկ կալուածէն մեզի ալ բաժին պիտի հանէք: Աւետարանը կ'ըսէ. երկու շապիկ ունեցողն մէկն ընկերին տալու է. եւ որովհետեւ դուք հոս մէկ գերեզմանատուն ունիք՝ պէտք է որ կէսը մեզի տաք... Աստուածահաճոյ գործ մ'է աս:

–Մեզի ալ այնպէս կ'թուի...

–Ձեր այս աստուածահաճոյ գործին համար վարձատրութիւն ալ պիտի ընդունիք...

–Չէ, չէ, մենք կաշառքով գործ չենք տեսներ:

–Կաշա՞ռք... Աստուած չընէ:

–Չենք ուզեր որ ըսեն, թէ աղաները ստակ կերած են ու ազգին տեղն ուրիշին ծախած են:

–Մենք ալ չենք ուզեր:

–Ինչո՞ւ բամբասուիիք:

–Ինչո՞ւ բամբասուիք... եւ վարձատրութիւն բառը գործածելով՝ հասկցնել ուզեցի, թէ Աստուծոյ կողմը պիտի վարձատրուիք...

–Ատոր ըսելիք չունինք. բայց կաշառք չենք ընդունիր: Ուրիշ բան է, եթէ դուք մեր տեսած գործէն գոհ ըլլաք եւ ձեր շնորհակալութիւնն յայտնելու համար մեզի դրամական նուէր մը ընէք... նայէ, ատոր ըսելիք չունինք, իբրեւ նուէր կ'ընդունինք. բայց իբրեւ կաշառք՝ բնաւ երբէք. աս մեր պատուոյն կ'զրկուի:

–Շատ լաւ. մնաք բարով:

–Երթաք բարով:

–Քանիմ' օրէն կտեսնուիիք:

Քանիմ' օրէն ետքը յունական տապանաքարեր կտեսնուին մեր գերեզմանատան մէջ. ժողովուրդն իրար կ'անցնի:

–Իմացա՞ր, պ. Կարապետ: